յայտող ամուսնութիւնների սկզբնաւորութիւնը, գնման սովորութեան առաջի սաղմերը։

Ակներև է, որ առևանգումն տեղի ունենալուց յետոյ պէտք էին թշնամական յարաբերութիւններ առաջանային փեսայի կողմնակիցների ու հարսի ազգականների միջև։ Ահա և այդ տեսակ թշնամական յարաբերութիւնները կեղծ ձևականութեամբ արտայայտւում են և այժմեան հարսանեաց մի քանի սովորութիւնների մէջ։ Նախ՝ այդ թշնամական վերաբերումը կարելի է տեսնել այն երևոյթի մէջ, որ հարսին շրջապատող ազգականներն ու մանաւանդ համագիւղացիքը ամենայն կերպ աշխատում են փեսացուի ընկերակիցներին ծաղր ու ծանակի և ընդհանրապէս վիրաւորանքի ենթարկել։

Գանձակի գաւառում սովորութիւն կայ երեկոյեան, երբ զուռնան նուագում է հարսնեաանը, բոլոր հարսնեորները նորից հաւաքւում են հարսի տունը... թաղթի վրայ իւր մակարներով շրջապատուած թագաւորը նստած է լինում և բերանը մի կտոր բան չի դնում, մինչև որ անները մի որևէ բան չի նուիրում նրան իբր ընդանքացէր։ Բայց իրեն այնպէս ծանր ու մեծ պահող թագաւորին սաստիկ սեացնում են թագուհու ընկերուհիները, եթէ սա գտած չի լինում նորահարսի մատների մէջ պահուած մոմը։ Աղջիկները ցոյց են տալիս այդ մոմը մակարներին և ծիծաղում են թագաւորի անշնորքութեան վրայ. և երբ հենց իրեն են ուղարկում, նա կարմրելով փող է վճարում, որ թաղցնեն։ Եթէ աղջիկները քիչ են համարում այդ՝ վերադարձնում են փողը և կրկին ցոյց տալիս մոմը, մինչև որ վերջապէս գոհացում են ստանում [1])։

Դարալագեազում, ինչպէս և շատ տեղերում, եթէ թագաւորամայրը նոյնպէս եկել է տղամարդկանց հետ հարսը տանելու՝ նորա մասին երբեմն ասում են զուարճանալու և ծիծաղելու համար հետևեալ խօսքերը.

---

[1]) Ե. Լալայեան՝ Գանձակի գաւառ.

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան